

Վարդգես Գուրուեան

Ոսկի Մետալով կը Պարգևատրուի Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութենէն

Վաստակաշատ մանկավարժ Վարդգես Գուրուեանի կրթական, կուսակցական, միութենական, մշակութային, երիտասարդական, եկեղեցական, ընկերային, համայնքային ազգանուէր եւ հայանպաստ գործունէութեան 50 տարիներու նուիրեալ ծառայութիւնը բարձր գնահատելով, Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութիւնը զինք պարգևատրած է Նախարարութեան բարձրագոյն պարգևով՝ «Ոսկե Հուշամետալով»:

Արդարեւ, Երկուշաբթի Հոկտեմբեր 26ին, ընտանեկան եւ բարեկամական սեղմ շրջանակի ներկայութեան, ՀՀ Լոս Անճելոսի Հիւպատոսարանի դահլիճին մէջ Աւագ Հիւպատոսի Տեղակալ Տիար Վալերի Մկրտումեան եւ Սփիւռքի Համայնքային եւ Մշակութային հարցերու պատասխանատու Հիւպատոս Տիկ. Արմէլլա Շաքարեանը Վարդգես Գուրուեանին յանձնեցին ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան Գնահատագիրն ու Ոսկի Յուշամետալը:

Խօսք առնելով, Ա. Հիւպատոսի Տեղակալ Տիար Վալերի Մկրտումեան անդրադարձաւ Վարդգես Գուրուեանի մանկավարժական եւ համայնքային գործունէութիւններուն մասին, յիշելով թէ ինչպէս անցեալին սերտօրէն գործակցած են երբ Գուրուեան Տնօրէնն էր Արշակ Տիգրանեան Վարժարանին: Հիւպատոսը մեծապէս գնահատեց Գուրուեանին ցուցաբերած ջերմ ընդունելութիւնները Հայաստանեան զանազան այցելու խումբերու նկատմամբ եւ անոր անսակարկ մասնակցութիւնը Հիւպատոսարանի համայնքային աշխատանքներուն եւ միջոցառումներուն: «Գուրուեանի մեծ փորձէն պէտք է օգտուի համայնքը: Տակաւին շատ բան կայ որ կրնաք տալ ձեր համայնքին, կրթական եւ համայնքային այլ ոլորտներուն մէջ» ըսաւ Հիւպատոսը:

Հիւպատոս Տիկ. Արմէլլա Շաքարեան յիշեցուց որ իր դուստրը աշակերտած էր Արշակ Տիգրանեան Վարժարանէն ներս եւ թէ իրենք միայն դրական յիշողութիւններ ունին Տնօրէն Վարդգես Գուրուեանի մասին:

Ներկաներէն Տիկ. Էմմա Ումրոյեան (նախկին ուսուցչուհի) եւ Տօթթ. Արմինէ Գլճեան (նախկին ծնողք) խօսք առնելով բարձր գնահատանքով խօսեցան Տնօրէն Վարդգես Գուրուեանի մասին որպէս Տնօրէն եւ որպէս «աշակերտներու երկրորդ հայր»:

Արդարեւ, Տիգրանեան Վարժարանի խիստ կարգապահութիւնը, կրթական բարձր մակարդակը, գեղարուեստական հանդէսներու գովելի մակարդակը արժանացած էին աշակերտներու, ծնողներու, պետական-

կրթական պատասխանատուներու եւ համայնքի գնահատանքին: Տօքթ. Արմինէ Գլճեան գովասանքով խօսեցաւ Տնօրէն Վարդգէս Գուրուեանի աշակերտներու հանդէպ ցուցաբերած գուրգուրանքին եւ ծնողներու հանդէպ հասկացող եւ յարգալից վերաբերմունքին: «Ան մեր բոլորին սերն ու յարգանքը շահած էր» ըսաւ Տօքթ. Գլճեան: Տիկ. Էմմա Ումրոյեանը վեր առաւ Գուրուեանի վարչական կարողութիւնները եւ անոր արդար վերաբերմունքը ուսուցիչներուն հանդէպ: «Ամէն տեղ էր ան, միշտ հսկողութեան բայց մանաւանդ օգնելու դիրքի մէջ» ըսաւ Տիկ. Ումրոյեան:

Ստեղծուած ընկերային ջերմ մթնոլորտի մէջ մտերմիկ խօսակցութիւններէ եւ բազմաթիւ մաղթանքներէ, ինչպէս նաեւ Վարդգէս Գուրուեանի շնորհակալական խօսքերէն եւ տակաւին համայնքին օգտակար ըլլալու պատրաստակամութեան խօստումէն ետք, Կլենտէյլի «Ֆինիսիա» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ պատշաճ ճաշ-հիւրասիրութիւն:

Կը շնորհաւորենք Վարդգէս Գուրուեանի ՀՀանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան այս պարգեւատրումը եւ անոր կը մաղթենք երկար եւ առողջ կեանք՝ հայ համայնքին աւելի եւս ծառայելու առաքելութեան մէջ:

Թղթակից